ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ

ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՍԵՒԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի ամավերջի հանդիսությունը:

Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի 2008-2009 թթ. ուսումնական տարվա հաշվետվությամբ հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Նա անդրադարձավ ճեմարանի արձանագրած հաջողություններին, ուսումնական տարվա գործընթացին, ճեմարանականների առաջադիմությանը եւ ճեմարանում կազմակերպված զանազան միջոցառումներին: Այս տարի Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավարտեց 23 ուսանող, որոնք ձեռնադրվելով՝ կլրացնեն Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների շարքերը: Սրբազան Հայրը, շնորհավորելով ավարտական լսարանի սաներին, հորդորեց նրանց չերկնչել դժվարություններից եւ կյանքի հարուցած խոչընդոտներից, այլ առ Աստված աներեր հավատով եւ աննկուն կամքի դրսեւորմամբ շարունակել ծառայությունը Հայոց Եկեղեցու անդաստանում:

Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի ուսումնական տարվա ամփոփմամբ հանդես եկավ դպրանոցի տեսուչ Տ. Գեւորգ աբեղա Սարոյանը: Հայր սուրբը գոհունակությամբ նշեց, որ անցնող տարում արձանագրվել են մի շարք հաջողություններ. լույս է տեսել ճեմարանի երգչախմբի ձայնասկավառակը, հրատարակվել է Վազգենյան դպրանոցի տարեգիրքը, ճեմարանականների համար կազմակերպվել են ուխտագնացություններ, կոնֆերանսներ եւ հանդիպումներ մտավորականների հետ:

Հանդիսության վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Գարեգին Բ Վեհափառը: Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ճեմարանների տեսչական, դասախոսական անձնակազմին՝ ջանադիր եւ նվիրյալ ծառայության համար:

«Ճեմարանական կրթության ավարտից հետո սկսվում է տեսիլքի մի շրջան, երբ յուրաքանչյուր սան, ամբարած իր հոգում անհրաժեշտ գիտելիքներ եւ ծառայության գիտակցություն ազգին եւ եկեղեցուն, կերտում է իր համար տեսիլքն իր ապագա ծառայության՝ ի՞նչ դերակատարություն, ի՞նչ ներդրում կարող է ինքն ունենալ ազգային-եկեղեցական մեր կյանքում: Եւ Մենք պիտի մաղթենք, որ Աստված միշտ զորացնի ձեզ ձեր հավատքի եւ ծառայական սիրո մեջ: Այս երկու հատկանիշները խիստ էական են, որպեսզի դուք երբեք չունենաք հուսահատության եւ դժգոհության պահեր: Ձեր ուսերին Քրիստոսի ծանր լուծը թեթեւաբեռ կլինի, եթե դուք հավատք, սեր ունենաք ձեր հոգու մեջ »,- նշեց Նորին Սրբությունը:

Վերջում տեղի ունեցավ մրցանակաբաշխություն. ուսումնական տարվա ընթացքում առաջադիմություն ցուցաբերած, եկեղեցասիրության եւ կարգապահության մեջ աչքի ընկած սաները Վեհափառ Հայրապետից նվերներ եւ պարգեւներ ստացան:

Հանդիսությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչով»:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 1-2-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տարբեր Եկեղեցիների եւ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների III համագումարը:

Համագումարի ընթացքում քննարկման նյութերն էին «Կրոնական առաջնորդների դերը հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի եւ համագործակցության վրա հիմնված խաղաղության հաստատման գործընթացում», «Համամարդկային եւ հոգեւոր արժեքներ, համաշխարհային էթիկա», «Երկխոսություն եւ համագործակցություն» եւ «Համաձայնություն ճգնաժամային ժամանակաշրջանում» թեմաները:

Համագումարի ընթացքում ընթերցվեց նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը՝ ուղղված հավաքի մասնակիցներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից վերոհիշյալ համագումարին մասնակցում էին են Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Թաթուլ սարկավագ Համբարձումյանը:

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ ՍԱՀԱԿԻ ԵՒ ՄԵՍՐՈՊԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՄԱԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Հուլիսի 2-ին Սուրբ Սահակ եւ Մեսրոպ թարգմանիչների տոնի առիթով Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի օրհնությամբ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նախասրահում բացվեց թեմի կիրակնօրյա վարժարանների եւ կենտրոնների սաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

Գերաշնորհ Սրբազան հայրն իր օրհնությունը եւ շնորհակալանքի խոսքը հղեց նախ ՄԱԿ-ի գրասենյակին, որի հարկի ներքո ներկայացվում էին երեխաների հրաշալի ստեղծագործությունները, ապա իր շնորհակալությունը հայտնեց թեմի կիրակնօրյա վարաժարանների բարերար տիար Ռեյ Ռիդրին եւ ԵՀԽ հայաստանյան բարեգործական Կլոր սեղան հիմնադրամին, որոնց աջակցության շնորհիվ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հովանու

ներքո գործում են մի քանի տասնյակ կրթական օջախներ: Ցուցահանդեսը նախաձեռնել էին Արմավիրի թեմի ՔԴԿ պատասխանատու Ռուզաննա Հարությունյանը, Գայ գյուղի Ս. Նշան եկեղեցու հոգեւոր-մշակութային կենտրոնի պատասխանատու Հասմիկ Մխիթարյանը եւ Քարակերտ գյուղի Գրիգոր Նարեկացու անվան հոգեւոր -մշակութային կենտրոնի ղեկավար Աննա Ղուկասյանը:

Ցուցահանդեսի բացման ընթացքում հրավիրվածներն ունկնդրեցին Գայի Սուրբ Նշան եկեղեցու հոգեւոր-մշակութային կենտրոնի երգչախմբի կատարումները՝ ղեկավարությամբ կենտրոնի պատասխանատու, երեցկին Հասմիկ Մխիթարյանի:

ԿԱՏԱՐՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԵՐԵՒԱՆՅԱՆ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՀՈՂՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 4-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, կատարվեց Երեւանի Ս. Կաթողիկե եկեղեցուն հարակից Ս. Աննա եկեղեցու եւ Վեհափառ Հայրապետի երեւանյան նստավայրի հողօրհնեքի արարողությունը: Եկեղեցին եւ կաթողիկոսական նոր նստավայրը կառուցվում են Հայ Առաքելական Եկեղեցու ազգային բարերար տեր եւ տիկին Հրայր եւ Աննա Հովնանյանների մեկենասությամբ եւ ճարտարապետ Հրաչ Պողոսյանի նախագծով:

Նորին Սրբությունը շարականների երգեցողության եւ աղոթքների ներքո կատարեց հողօրհնեքը:

Նորին Սրբությունը նշեց, որ խորհրդային անաստվածության տարիներին Ս. Կաթողիկե եկեղեցին մայրաքաղաքի մյուս եկեղեցիների նման քանդվելու եւ փլուզվելու դառն ճակատագրին արժանացավ, բայց Տիրոջ ողորմությամբ պահպանված նրա մի հատվածը երկար տարիներ արդեն ծառայում է հայ հավատացյալներին. այստեղ շարունակում է հնչել հայ քրիստոնյայի աղոթքը, կատարվում են եկեղեցական արարողություններ:

Հողօրհնեքի արարողությանը ներկա էին Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ազգային բարերար Վահագն Հովնանյանը, բազմաթիվ հավատացյալներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈԼԻԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Հուլիսի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ուխտավորաբար Հայաստանում գտնվող Պավիա քաղաքի (Իտալիա) արքեպիսկոպոսարանի ճեմարանի սաներին՝ Պավիայի արքեպիսկոպոս Գերապատիվ Ջովաննի Ջուդիչի գլխավորությամբ:



Սուրբ Աննա Եկեղեցու եւ կաթողիկոսական Երեւանյան նստավայրի մակետ

Սուրբ Աննա Եկեղեցու եւ կաթողիկոսական Երեւանյան նստավայրի հողօրհնեքի արարողություն

Վեհափառ Հայրապետը, ողջունելով կաթոլիկ երիտասարդների այցը հայոց հոգեւոր կենտրոն, անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ առկա ջերմ հարաբերություններին՝ նկատելով որ, իբրեւ վաղվա հոգեւորականներ, այսօրվա ճեմարանականները ապագայում իրենց դրական մասնակցությունը պիտի ունենան այդ հարաբերությունների խորացմանը:

Իր հերթին Ջովաննի Ջուդիչ արքեպիսկոպոսը նշեց, որ իրենց համար մեծ պատիվ է լինել Հայաստանում եւ հանդիպել Հայոց Հայրապետի հետ: Նրա խոսքով՝ ինչպես իր, այնպես էլ խմբի մյուս անդամների համար հուզիչ ու փրկարարիչ է ծանոթությունը հայոց քրիստոնեական մշակույթի ու ավանդության հետ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՔ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՎԵՑԻՆ ՄՈԼԴՈՎԱ

Հուլիսի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու Քիշինեւի եւ Համայն Մոլդովայի Վլադիմիր միտրոպոլիտի խնդրանքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական երեք սրբությունները՝ Ս. Հովհաննես Մկրտչի, Ս. Պետրոս առաքյալի եւ Ս. Գեւորգ զորավարի մասունքները տարվեցին Քիշինեւ՝ Մոլդովայի հավատավոր ժողովրդի երկրպագության համար:

Այս առիթով Քիշինեւի եւ Համայն Մոլդովայի Վլադիմիր միտրոպոլիտի օրհնությամբ Մայր Աթոռ էին ժամանել Տ. Վիկտոր ավագ քահանա Պլեշկան եւ Իոն ավագ սարկավագ Նովակը: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Վլադիմիր միտրոպոլիտի ներկայացուցիչների հետ Հայոց Եկեղեցու սրբությունները Քիշինեւ փոխադրեցին Մոլդովայի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տ. Սահակ աբեղա Շաքարյանը եւ Մայր Աթոռի թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

Հուլիսի 11-21-ը Հայոց Եկեղեցու երեք սրբությունները զետեղվել էին Քիշինեւի Քրիստոսի Ծննդյան Մայր Տաճարում եւ Մոլդովայի հավատավոր ժողովրդին հնարավորություն էր ընձեռվել օրհնություն ստանալու սրբերի մասունքներից: Քիշինեւի Ս. Աստվածածին հայկական եկեղեցու հավատավոր հայորդիները նույնպես հնարավորություն ունեցան երկրպագելու սրբոց մասունքները, որոնք մեկ օրով դրվել էին Քիշնեւի հայոց եկեղեցում :

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ գերմանացի ուխտավորների՝ առաջնորդությամբ Գերմանիայի եպիսկոպոսաց ժողովի մամլո խոսնակ Մատթիաս Քոֆֆի:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար՝ Մատ-

թիաս Քոֆֆն ուրախություն հայտնեց, որ մոտիկից կարողանում են ծանոթանալ Հայ Առաքելական Եկեղեցու դարավոր պատմությանն ու հոյակերտ եկեղեցիներին:

Ապա գերմանացի ուխտավորներին իր օրհնությունն ու բարեմաղթանքը փոխանցեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունն ու ներկա գործունեությունը: Անդրադառնալով հայոց ցեղասպանության եւ խորհրդային անաստվածության տարիների հետեւանքով առաջացած դժվարություններին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այսօր էլ եկեղեցին կանգնած է բազում մարտահրավերների առաջ: Հայոց Հայրապետը նշեց, որ Հայոց Եկեղեցու համար այսօր առաջնային են քրիստոնեական դաստիարակությունը, հոգեւորականների պատրաստությունը, խոնարհված եկեղեցիների վերականգնումն ու նորերի կառուցումը: Նորին Սրբությունը նաեւ ուրախությամբ արձանագրեց, որ վերջին շրջանում հոգեւոր վերազարթոնք է ապրում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Հայ Առաքելական Եկեղեցին: Նա հույս հայտնեց, որ Աստծո օգնականությամբ եւ ջանադիր աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի հաղթահարել եկեղեցու առաջ ծառացած շատ մարտահրավերներ:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայոց լեզվի եւ գրականության համահայկական օլիմպիադայի եւ հայագիտական գիտելիքների մրցույթի մասնակիցներին:

Բացման խոսքով հանդես եկավ եւ մասնակիցներին Նորին Սրբությանը ներկայացրեց Մայր Աթոռի ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Անդրադառնալով օլիմպիադային եւ հայագիտական գիտելիքների մրցույթին՝ Հայր սուրբը նշեց, որ նմանատիպ մրցույթների նպատակն է ոչ միայն ստուգել Սիյոնքի, Հայաստանի եւ Արցախի հայորդիների հայագիտական գիտելիքները, այլեւ կապել նրանց Հայրենիքի եւ մեր ազգային սրբությունների հետ:

Այնուհետեւ ներկաներին իր հայրական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը մեկ անգամ եւս կարեւորեց մայրենի լեզվի եւ գրականության իմացության անհրաժեշտությունը յուրաքանչյուր հայի կյանքում եւ հորդորեց ներկաներին սիրել Հայրենիքն ու Հայոց Եկեղեցին եւ նախանձախնդիր լինել մեր ազգային արժեքների պահպանմանը: Հայոց Հայրապետը կարեւորեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարությունը, որը մեր ժողովրդի կյանքում եղել է հայ մարդու ինքնության եւ գոյության հիմնասյուներից մեկը:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՒԱՆ ՉՎԵՐԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՆՔՆԱԹԻՌԻ ԱՂԵՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Խորը ցավով տեղեկացանք Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող օդանավի կործանման եւ դրա հետեւանքով բազմաթիվ մարդկային զոհերի մասին:

Ողբերգական այս իրադարձությունը մեծ վիշտ ու տխրություն բերեց ամենքիս: Սգում ենք աղետից զոհվածների կորուստը համայն մեր ժողովրդի հետ:

Հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր սրտակցությունն ու ցավակցությունն ենք բերում զոհվածների բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված մխիթարի եւ զորացնի վշտաբեկ ու սգակիր սրտերը՝ հաղթահարելու կորստի ցավը եւ Իր անբավ ողորմությանն արժանացնի հոգիները հանգուցյալների:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի վթարի հետեւանքով զոհվածների հոգիների խաղաղության համար:

Արարողության ընթացքում ներկաներին իր ցավակցական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետը նաեւ իր ցավակցությունն ու սրտակցությունը հայտնեց զոհվածների բոլոր հարազատներին, Իրանի եւ Վրաստանի իշխանություններին եւ ժողովուրդներին՝ աղոթելով, որ Տերը հանգստություն եւ երանություն պարգեւի հանգուցյալների հոգիներին եւ Սուրբ Հոգու շնորհներով մխիթարի ու սփոփի սգակիր բոլոր սրտերը:

Հոգեհանգստին մասնակցում էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, կառավարության անդամներ, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մեյեդ Ալի Սաղայանը, Մայր Աթոռի միաբաններ, զոհվածների հարազատներ:

ԵԵԿ 13-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԼԻՈՆՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակությունն իր մասնակցությունը բերեց հուլիսի 15-21-ը Լիոնում կայացած Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի «Քրիստոսով

մեկ հույսի կոչվածները» թեմայով 13-րդ համաժողովին: Համաժողովի ընթացքում ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը՝ ուղղված ԵԵԿ 13-րդ համաժողովի մասնակիցներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էին Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը (Առաջնորդ Ֆրանսիայի Հայոց թեմի, պատվիրակության ղեկավար), Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահինյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը, երեցկին Փոլա Դեւեջյանը, Անի Ղազարյանը (Լոզանի համալսարանի ուսանողուհի):

Համաժողովի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանն ընտրվեց ԵԵԿ Կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ Մայր Աթոռի միաբան Տ. Շահե աբեղա Անանյանը՝ աշխատանքային խմբի անդամ, որը մինչեւ 2013 թ. վերատեսության պիտի ենթարկի ԵԵԿ առաքելության իրականացման ձեւերն ու կանոնադրությունը եւ արդյունքները ներկայացնի ԵԵԿ հաջորդ համաժողովի հաստատմանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ ԱՐՄԱՂԱՆԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՌԸ

Հուլիսի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Գեղարքունիքի մարզի Արմաղանի Ս. Հարություն մատուռը, որի բարերարն է տաշքենդաբնակ Ռադիկ Մխիթարյանը: Այն կառուցվել է Ռաֆիկ Հերգընյանի նախագծով:

Սրբազան արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց մատրան բարերարին եւ կառուցմանը նպաստած բոլոր մարդկանց: Այնուհետեւ Հայոց Հայրապետը, ընդառաջելով Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ռադիկ Մխիթարյանի ծառայություններն ու վաստակը, նրա կուրծքը զարդարեց Հայոց Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով:

Մատրան օծմանը ներկա էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, մարզային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Սոխոլովացի Սուրբ Հարությունը
վերամբարձ դառնալու ցանկանալ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հուլիսի 19-ին Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որի առիթով բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Պատարագ մատուցվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում: Սրբազան արարողության ընթացքում ձեռամբ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 27 միաբան սարկավագներ: Հայոց Եկեղեցու այս կարեւոր իրադարձությանը մասնակցում էր նաեւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը քահանայության կոչեց 27 սարկավագների, Ս. Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ նրանց շնորհելով հոգեւոր նոր անուններ: Խորեն սարկավագ Մանուկյանը վերակոչվեց Տ. Մովսես քահանա, Սարգիս սարկավագ Այվազյանը՝ Տ. Սարգիս աբեղա, Սահակ սարկավագ Սահակյանը՝ Տ. Դավիթ քահանա, Նոյ սարկավագ Նազարյանը՝ Տ. Շահե քահանա, Հակոբ սարկավագ Գեւորգյանը՝ Տ. Անդրանիկ աբեղա, Վահագն սարկավագ Իգնաթեւոսյանը՝ Տ. Ստեփանոս քահանա, Արսեն սարկավագ Հարությունյանը՝ Տ. Ներսեսաբեղա, Հրաչյա սարկավագ Սահակյանը՝ Տ. Գալուստ քահանա, Արտակ սարկավագ Ստեփանյանը՝ Տ. Բաբկեն քահանա, Ռուսլան սարկավագ Պետրոսյանը՝ Տ. Հարություն քահանա, Արթուր սարկավագ Մխիթարյանը՝ Տ. Տիգրան քահանա, Սարգիս սարկավագ Քեսաբլյանը՝ Տ. Հովհաննես քահանա, Էդուարդ սարկավագ Սահակյանը՝ Տ. Հայկ քահանա, Խաչատուր սարկավագ Գյոզալյանը՝ Տ. Վարդ քահանա, Սմբատ սարկավագ Վարդազարյանը՝ Տ. Առաքել քահանա, Միքայել սարկավագ Բարսեղյանը՝ Տ. Թադեոս քահանա, Ավետիք սարկավագ Հովհաննիսյանը՝ Տ. Նիկողոս քահանա, Աշոտ սարկավագ Միրզոյանը՝ Տ. Գեւորգ քահանա, Արմեն սարկավագ Խաչատրյանը՝ Տ. Եղիա աբեղա, Էդգար սարկավագ Հովհաննիսյանը՝ Տ. Լեւոն քահանա, Հայկ սարկավագ Մկրտչյանը՝ Տ. Վաչե աբեղա, Հովհաննես սարկավագ Ազնավուրյանը՝ Տ. Մեդրակ քահանա, Թաթուլ սարկավագ Համբարձումյանը՝ Տ. Գարեգին աբեղա, Նորայր սարկավագ Սահակյանը՝ Տ. Հակոբ աբեղա, Նորայր սարկավագ Ղարիբյանը՝ Տ. Սահակ քահանա, Արմեն սարկավագ Հմայակյանը՝ Տ. Նշան աբեղա, Նարեկ սարկավագ Վարդանյանը՝ Տ. Պողոս քահանա:

Իր հոգեշունչ քարոզում Խաժակ Սրբազանը հորդորեց նորընծա քահանաներին աներեր հավատով, նվիրումով եւ նախանձախնդրությամբ ծառայել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այս ուրախալի առիթով Սրբազան Հայրը շնորհավորեց նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հույս հայտնեց, որ Նորին Սրբության օրոք սկսված Հայոց Եկեղեցու վերազարթոնքը դեռ երկար տարիներ պիտի շարունակվի՝ տալով իր քաղցր պտուղները:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաեւ նորընծա ինը քահանաների վեղարի փվչության արարողությունը: Տ. Սարգիս, Տ. Անդրանիկ, Տ. Ներսես, Տ. Եղիա, Տ. Վաչե, Տ. Գարեգին, Տ. Հակոբ, Տ. Նշան եւ Տ. Պողոս կուսակրոն քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՄԷՋ

Օրն էր կիրակի՝ 21 յուլիսի 2009 թուականի: Տաճարը հազիւ կիսով լեցուն էր՝ ներկայ ըլլալու քահանայական աննախընթաց ձեռնադրութեան:

Այդ օրը մեր արդի հայ եկեղեցական պատմութեան մէջ իր նախընթացը չունեցող երեւոյթ մըն էր: Պատարագի ընթացքին եկեղեցական ասպարէզ պիտի ընդունէին 27 քահանաներ, որոնցմէ քանի մը հոգի յետմիջօրէին պիտի ստանային վեղար՝ դառնալու համար կուսակրօն աբեղաներ:

Եկեղեցիի աջակողմեան աշխարհականներուն յատկացուած բաժինը գրաւուած էր պետական անձնաւորութիւններու եւ արտասահմանեան հիւրերու կողմէ: Իսկ Վեհափառ Հայրապետի ձախակողմեան բաժինը վերապահուած էր եկեղեցական դասին:

Հարուստ ու ճոխ արարողութիւն կ'ընթանար կարգ ու կանոնով: Արարողութեան գրաւիչ եւ ամենայուզիչ պահերէն մին ուսահամբոյրի կարգն էր, երբ Վեհափառ Հայրապետը կը մօտենար իւրաքանչիւր նորօծ քահանայի եւ կ'ողջունուէր անոր հետ, եւ այսպէս մինչեւ վերջին եպիսկոպոսը: Որքան յուզուեցայ այս տեսարանով, երբ Վեհափառն իր հայրապետական բարձր գահէն կը խոնարհէր համբուրելու նորօծ քահանաներուն ձեռքերը, այսպիսով իսկ ընդունելով անոնց Էջմիածնի քահանայական միաբանութեան շարքերը: Աւելորդ ձեւապաշտութիւն չէր Հայրապետի այդ քայլը, այլ միաբանութիւնը ամրապնդելու կամքի արտայայտութիւն:

Սրտանց կը մաղթեմ այս նորընծաներուն , որ ամուր մնան հոգեւորականի իրենց կոչումին մէջ: Այս երիտասարդներուն մեծամասնութիւնը կու գայ աշխարհիկ կեանքէն եւ որպէս հոգեւորականներ պիտի երթան եւ գործեն նոյն աշխարհիկ կեանքը վարող ժողովուրդի մէջ: Սրտիս խորերէն կը մաղթեմ որ այս խորանէն ստացած ասպուածային շնորհքը իրենց կեանքի եւ գործունէութեան ուղին ըլլայ:

Հաղորդութեան արարողութիւնը անցաւ շատ կանոնաւոր, բաժնուած երկու կողմէ երեք վարդապետներով եւ մէջտեղի թափուր միջանցքով, հանգիստ ճամբայ թողնելով հաղորդութիւն ստացածներուն:

Շնորհիւ Վեհափառ Հայրապետի ջանքերուն յառաջընթաց շարժումի մէջ կ'ապրի Հայաստանի կրօնական կեանքը:

Վերջաւորութեան, նորօծ հոգեւորականները բոլորն ալ իջան սուրբ խորանէն եւ Վեհափառ Հայրապետի պահպանիչով վերջ գտաւ այս հոյակապ արարողութիւնը:

Բժիշկ Լեւոն Մոմճեան
Ֆրանսիա, Փարիզ

Քահանայական ձեռնադրություն Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

ԺՈՂՈՎ ԹՐՈՆԴՀԱՅՄՈՒՄ

Հուլիսի 27-29-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը մասնակցեցին Թրոնդհայմ (Նորվեգիա) քաղաքում կայացած «Կանոնակարգ սրբավայրերի վերաբերյալ» միջազգային ժողովին՝ կազմակերպված «Օսլոյի խաղաղության կենտրոն» եւ «Մեկ աշխարհ երկխոսության մեջ» կազմակերպությունների կողմից:

Ժողովականները քննարկումների արդյունքում մշակեցին եւ ընդունեցին կանոնակարգ սրբավայրերի գործածության, ինչպես նաեւ սրբավայրերի հանդեպ տարբեր կրոնական համայնքների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Ժողովին մասնակցում էին քրիստոնյա, մահմեդական եւ հուդայական կրոնական եւ քաղաքական գործիչներ, գիտնականներ Եւրոպայի եւ Միջին Արեւելքի տարբեր երկրներից:

ՀՆԴԿԱՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ

Հուլիսի 13-ին Կալկաթայի Կաթոլիկ եկեղեցու Արքեպիսկոպոսական նստավայրում Գերապատիվ Ղուկաս արք. Սարքարը ընդունեց հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ՝ Հոգեշնարհ Հայր Խորեն Հովհաննիսյանին:

Ողջունելով Հնդկահայոց հոգեւոր հովվին՝ Գերապատիվ արքեպիսկոպոսն իր ուրախությունը հայտնեց, որ բազմադարյա հարաբերությունները երկու քույր եկեղեցիների միջեւ բարեկամական ջերմ զգացումներով շարունակվում են՝ ամրապնդվելով նոր համագործակցություններով, ինչպես նաեւ հետաքրքրություն հայտնեց հնդկահայ համայնքի, գործող եկեղեցիների եւ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի մասին:

Երկու կողմերը փոխադարձ բարեկամական հարաբերություններ հաստատեցին՝ հետագայում սերտորեն համագործակցելու նպատակով, ինչպես նաեւ հաջողություններ մաղթեցին միմյանց՝ Տիրոջ օգնականությունը հայցելով երկու քույր եկեղեցիների համար: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Սփյուռքի հնագույն կրթօջախներից մեկը Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանը, այսօր նույն եռանդով շարունակում է իր առաջխաղացումը: Ճեմարանը գտնվում է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո՝ վայելելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր ուշադրությունը:

Ներկայիս նորանշանակ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ՝ Հոգեշնորհ Տ. Խորեն աբդ. Հովհաննիսյանի, ինչպես նաեւ Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից ջանք չի խնայվում Կալկաթայում գտնվող պատմական այս կրթօջախի բարելավման ու պայծառացման համար:

Այժմ Հայոց Մարդասիրական ճեմարանում ուսանում են հայորդիներ՝ Հնդկաստանից, Հայաստանից, Պարսկաստանից եւ Իրաքից, որոնք գալիս են գիտելիքներ ձեռք բերելու եւ հայեցի դաստիարակություն ստանալու համար:

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, Մարդասիրական ճենարանն ունեցավ իր շրջանավարտների բարի հունձքը: Ավարտելով տասնամյա դասընթացը, ութ շրջանավարտներից վեցը՝ Հայաստանից եւ Պարսկաստանից, ընդունվեցին Կալկաթայի լավագույն դպրոցները՝ շարունակելու տասնմեկ եւ տասներկուերորդ դասարանները: Նրանցից չորսը՝ Երանուհի Առաքելյան, Անդրանիկ Գեւորգյան, Կարեն Մկրտչյան եւ Արմեն Մակարյան, այժմ սովորում են Կալկաթայի «La Martiniere», իսկ Գագիկ Չիլինգարյանը եւ Ադեն Դավուդին՝ «The Assembly of God Church» վարժարաններում: Ավարտելով ճեմարանի տասնամյա դասընթացը՝ շրջանավարտներից երկուսը՝ Գոռ Գեւորգյանը եւ Էջմին Շահիջանին, վերադարձան՝ միանալու իրենց ընտանիքներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՄՈՍԿՎԱ

Հուլիսի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկօրյա պաշտոնական այցով մեկնեց Մոսկվա՝ հանդիպելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալ՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա Պատրիարքի հետ:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատրիարքական փոխանորդ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռուբեն Վարդանյանը, տիար Գագիկ Ղազինյանը եւ Տ. Հովնան աբեղա Հակոբյանը՝ իբրեւ գավազանակիր:

Հուլիսի 16-ի երեկոյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Մոսկվա, վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ եւ իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին:

«Ձերդ Սրբություն, եկել ենք վերամրագրելու եղբայրական սիրո եւ բարեկամության այն ուխտը, որ համատեղ աղոթքով, աշխատանքով եւ միմյանց զորակցությամբ կնքել են մեր նախորդ Հայրապետները եւ մեր ժողովուրդները եւ որը հիմն է մեր երկու Եկեղեցիների համագործակցության»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով Ռուս Եկեղեցու եւ իշխանությունների աջակցությունը ռուսահայ համայնքին ու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԹՐՈՆԴՀԱՅՄՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հուլիսի 27-29-ը Թրոնդհայմ (Նորվեգիա) քաղաքում Հայոց Եկեղեցու պատվիրակությունը (Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյան) մասնակցեց «Օսլոյի՝ Խաղաղության եւ մարդու իրավունքների կենտրոն» եւ «Մեկ աշխարհի երկխոսության մեջ» կազմակերպությունների գումարած «Կանոնակարգ սրբավայրերի համար» միջազգային համաժողովին:

Ժողովականները մշակեցին եւ ընդունեցին կանոնակարգ սրբավայրերի գործածության, ինչպես նաեւ սրբավայրերի հանդեպ տարբեր կրոնական համայնքների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Այդ ընթացքում քննարկվող խնդրի առնչությամբ ներկայացվեցին հայոց եկեղեցական կյանքում առկա պարագաները (Թուրքիայում եւ Վրաստանում կրոնական փոքրամասնությունների իրավունքների խախտումը եւ սրբավայրերի նկատմամբ իրավունքների ոտնահարումը, Ադրբեջանում կրոնական նշանակության հուշարձանների ավերումը), որպեսզի դրանք եւս նկատի առնվեն:

Կանոնակարգում տեղ են գտել դրույթներ սրբավայրերի պահպանության, վերակառուցման, գործածության, դրանց նկատմամբ իրավունքների, ժամանակին բռնագրավված սրբավայրերի վերադարձման, նոր սրբավայրերի հաստատման վերաբերյալ, ինչպես նաեւ հոդվածներ կանոնակարգի գործադրության վերահսկման համար ստեղծվելիք տեղական, ազգային եւ միջազգային մարմինների մասին:

Նախատեսվում է նախ կազմակերպել ընդունված կանոնակարգի քննարկումներ Եւրոպայի եւ Միջին Արեւելքի երկրներում՝ ապահովելու տեղական քրիստոնյա, մահմեդական եւ հուդայական համայնքների, ինչպես նաեւ քաղաքական եւ կրոնական առաջնորդների աջակցությունը, ապա երկխոսություն սկսել այլ կրոնների ներկայացուցիչների հետ՝ ընդգծելու կանոնակարգի համաշխարհային կարեւորությունը: Այնուհետեւ նրանք միջազգային հեղինակավոր կառույցների միջոցով հետամուտ են լինելու կանոնակարգը ՄԱԿ-ի միջազ-

գային կոնվենցիայի վերածմանը, որպեսզի այն իբրեւ պաշտոնական փաստաթուղթ կիրառության դրվի տարբեր երկրներում:

Կից ներկայացվում է ընդունված կանոնակարգի բնագիրը:

ԱՌՆԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

2008թ. հուլիսի 26-28-ը «Օսլոյի՝ Խաղաղություն եւ մարդու իրավունքների կենտրոնի» եւ «Մեկ աշխարհ երկխոսության մեջ» կազմակերպության հրավերով մենք հավաքվեցինք Սթիքլսեդում եւ Թրոնդհայմում, վայրեր, որտեղ նահատակվել է Նորվեգիայի հովանավոր սուրբը՝ Սուրբ Օլավը, եւ որոնք հարգվում են որպես նորվեգացիների հոգեւոր օրրան: Մենք՝ կրոնական առաջնորդներս, գիտնականներս, քաղաքագետներս, ինչպես նաեւ քրիստոնյա, մահմեդական եւ հրեա համայնքների անդամներս Եւրոպայի ու Միջին Արեւելքի տարբեր վայրերից հավաքվել ենք մեկտեղ՝ քննարկելու «Սրբավայրերը՝ ընհարումի կամ երկխոսության վայրեր» թեման: Մենք հույսով ենք, որ այս հանդիպումը կլինի առաջին քայլը այն գործընթացի, որը կարող է առաջնորդել Սրբավայրերի համար համաշխարհային համապտեղ կանոնակարգի հաստատման:

Նախեւառաջ մենք միասնաբար եւ վճռականորեն դատապարտում ենք բռնության եւ արյունահեղության բոլոր ձեւերը: Սրբավայրերը այնպիսի հավաքավայրեր են, որտեղ մարդը հանդիպում է Արարչի հետ եւ այդ պատճառով դրանք չպիտի պղծվեն կամ վնասվեն եւ պետք է արժանապատվությամբ պահպանվեն հետագա սերունդների համար: Մենք քննարկել ենք Սրբավայրերին վերաբերող ընդհարումներն ու խնդիրները , ինչպես նաեւ փորձել ենք ճանաչել դրանց բնույթը եւ թե ինչպես մենք կարող ենք երաշխավորել, որ դրանք ավելի շուտ խաղաղության ու հաշտության վայրեր են, քան ընդհարումների կիզակետային հարցեր: Մենք համաձայնության ենք եկել որոշակի կետերում. Սրբավայրերը հասարակական ոլորտի մաս են կազմում: Դրանք վայրեր են, որտեղ անհատները եւ համայնքները միավորվում են հոգեւոր եղբայրության մեջ, վերահաստատում են պատմական ժառանգությունը եւ ստանում հոգեւոր համալրում իրենց անձնական եւ համայնական ամենօրյա կյանքի համար: Սրբավայրերը արտացոլում են անհատների եւ հավատքային խմբերի խոր կրոնական ինքնությունը եւ վայրեր են, որտեղ կրոնը, պատմությունը եւ քաղաքականությունը հանդիպում են:

Մենք համաձայնել ենք, որ կարիք կա շարունակելու մեր քննարկումները՝ պարզեցնելու համար Սրբավայրերի վերաբերյալ այն սովորական արժեքները, որ մենք կիսում ենք: Մենք հույս ունենք զարգացնել սա Սրբավայրերի համար համատեղ ընդունած կանոնակարգի մեջ, որն արտացոլում է սովորական արժեքներ հետեւյալի մասին.

1. համընդհանուր հարգանք սրբության հանդեպ
2. փոխադարձ ճանաչում եւ հարգանք միմյանց սրբավայրերի հանդեպ
3. հարգանք անհատների եւ համայնքների հանդեպ, ովքեր հոչակում են իրենց հավատը այդ Սրբավայրերի հանդեպ:

4. Այս արժեքներն ընդունելու ընթացքում մենք ուզում ենք քննարկել հետեւյալին վերաբերող հարցերը՝

5. Սրբավայրերի համար կանոնակարգը զարգացնելու նպատակով կրոնական առաջնորդների միջեւ համագործակցություն, որ ընդգրկում է կրոնական համայնքների պահանջները եւ օժանդակվում է քաղաքական ղեկավարների կողմից:

6. Սրբավայրերի պահպանում եւ զարգացում՝ համաձայն նրանց հատուկ կարիքների

7. Սրբավայրերի հանդեպ փոխադարձ հարգանքն ամրապնդելու ուղղությամբ լայն կրթական քաղաքականություն

8. Սրբավայրերի ղեկավարության հետ քննարկումների ժամանակ կրոնական առաջնորդների խաղացած դրական դերակատարության մասին իրազեկություն եւ դրանց շուրջ կրքերի բորբոքման կանխում

9. Մուտքի թույլտվություն դեպի սրբավայրեր, ինչը հիմնարար սկզբունք է կրոնի ազատության առումով

10. Վիրավորանք սրբավայրերին՝ մի կողմի ուժը մյուսի հանդեպ հռչակելու նպատակով կամ քաղաքական նկատառումով

11. Սրբավայրերի ավերում՝ նպատակ ունենալով ժխտել մարդկանց կապվածությունը իրենց սրբավայրերին եւ իրենց պատմության հիմնարար բնագավառներին

12. Մարդկանց իրավունքը՝ պաշտամունք մատուցելու եւ ապահով զգալու այն վայրերում, որոնք իրենց կրոնական ժառանգության մաս են կազմում

13. Պատմության մեկնաբանում այն կերպ, որը թույլ կտա մեզ ավելի առաջ շարժվել, քան թե կառչած մնալ մեր անցյալին

14. Իրենց միավորող համայնքի կամքին հակառակ սրբավայրերի օգտագործում ուրիշ նպատակներով

15. Զբոսաշրջիկների այցելություն սրբավայրեր:

Մենք ծրագրել ենք օգտագործել հաջորդ տարին՝ շարունակելու համար փոխանակումները այս թեմաներով, որպեսզի փորձով զարգացնենք այս նպատակները: Մենք ցանկություն ունենք ընդլայնել մասնակիցների ճանաչողության տեսադաշտը՝ ցույց տալու համար, որ սրբավայրերն ընդգրկում են գլոբալ աստիճանի վրա քննարկվելիք խնդիր:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներածություն

Մենք՝ քրիստոնյա, հրեա եւ մահմեդական կրոնական առաջնորդներս, գիտնականներս, քաղաքագետներս, ինչպես նաեւ Եւրոպայի ու Միջին Արեւելքի տարբեր վայրերից քաղաքակիրթ հասարակության անդամներս.

Վճռել ենք համագործակցել երկխոսության ոգով եւ ընդհանուր եզրեր գտնել՝ հիմնված միմյանց նկատմամբ հարգանքի վրա՝ կրոնի կամ հավատքի ազատության համար եւ յուրաքանչյուր կրոնական ավանդության ամբողջականության համար,

Կիսել աշխարհին ընկալելու տեսադաշտը, որտեղ սուրբ վայրերը համաշխարհային մակարդակով ճանաչված են որպես իրենց համապատասխան կրոններին կամ հավատքի ավանդույթներին նվիրված եւ որտեղ բոլորի կողմից հարգված է անհատների եւ համայնքների միակցումը իրենց սուրբ վայրերին՝ նկատի չունենալով նրանց հավատքը,

Ճանաչել, որ ողջ աշխարհում շատ հակասությունների մեջ սրբավայրերը եղել են վեճի կենտրոն կամ ավերածության թիրախ եւ նկատի ունենալ կրոնական փոքրամասնությունների սրբավայրերի առանձնահատուկ խոցելիությունը,

Փնտրել սրբավայրերը պահպանելու համար սկզբունքների շրջանակ, երաշխավորելով կրոնական ազատությունը՝ օգտագործել դրանք եւ ճանաչել դրանք որպես խաղաղության եւ հաշտության վայրեր,

Ճանաչել դրական դերը, որ կրոնական ղեկավարները կարող են խաղալ սրբավայրերի հետ կապ ունեցող հակասությունների առնչությամբ եւ վերահաստատել բարոյական հնարավորությունը խոսելու ուրիշների սրբավայրերի պահպանության համար՝ նկատի չունենալով կրոնը,

Տիմնել միջազգային համաձայնագրեր եւ չափանիշներ, որով կապահովվի կրոնի կամ հավատի ազատությունը, եւ այլ մարդկային օրենքներ՝ պահպանելու մշակութային ժառանգությունը եւ պաշտպանելու քաղաքացիներին զինված ընդհարումներում,

Կոչ անել կրոնական առաջնորդներին, քաղաքական ղեկավարներին եւ քաղաքացիական ու ոստիկանական հեղինակություններին տեղական, ազգային եւ միջազգային աստիճաններին համապատասխան միանալ մեզ ինչպես մենք՝

Հանդիսավորապես խոստանալ հարգել եւ աշխատել ամբողջ աշխարհում հետեւյալն իրագործելու ուղղությամբ:

Պայմաններ

Հոդված 1. Սահմանումներ

Սրբավայրերը կրոնական կարեւորության վայրեր են մասնավոր կրոնական համայնքների համար: Նրանք ներառում են (բայց սահմանափակված չեն) պաշտամունքի վայրեր, գերեզմանատներ եւ աճյունատուփեր՝ իրենց միավորելով ամենամերձավոր շրջակայքը, երբ սրանք ձեւավորում են վայրի լրիվ մաս:

Այս Կանոնակարգի նպատակների համար սրբավայրերը սահմանված եւ սահմանափակված տարածքով վայրեր են, որ անվանված են այդպես յուրաքանչյուր կրոնական համայնքի կողմից իր սովորույթների համաձայն, ճանաչելով նաեւ, որ մի վայրը կարող է նվիրված լինել ավելի քան մեկ համայնքի:

Հոդված 2. Սրբավայրերի պահպանություն

Սրբավայրերը պետք է պահպանվեն ներկա եւ ապագա սերունդների համար արժանապատվությամբ, լրիվությամբ եւ հարգանքով իրենց անվան եւ ինքնության համար: Նրանք պետք է պահպանվեն եւ՛ որպես կրոնական կարեւորության վայրեր, եւ՛ որպես պատմական ու մշակութային ժառանգություն իրենց համայնքների եւ մարդկության: Նրանք չպետք է պղծվեն կամ վնասվեն, իսկ կրոնական համայնքներն չպետք է հարկադրաբար զրկվեն իրենց սրբավայրերից:

Որտեղ անհրաժեշտ է՝ երաշխավորել սրբավայրերի պահպանությունը: Գործի հետ առնչություն ունեցող հեղինակությունները պետք է նկատի առնեն՝ պաշտպանական գոտի հաստատելով նրա շուրջը, արգելելով կամ սահմանափակելով կառուցումը կամ զարգացումը՝ առանց սեփականության իրավունքների հանդեպ նախապաշարումներ ունենալու:

Եթե սրբավայրը ենթարկվում է որոշակի սահմանափակումների՝ իր անվանմանը համար՝ որպես ազգային ժառանգության վայր, միևնույն ժամանակ պետք է երաշխավորվի օժանդակությունը, որի կարիքը կարող է լինել այս սահմանափակումների տակ նրա շարունակական գործունեության համար:

Հոդված 3. Մուտքի հնարավորություն

Որեւէ անձի մուտքը սրբավայր պետք է լինի միայն այնպիսի սահմանափակումների առարկա, որոնք հռչակված են վայրին վերաբերող կրոնական կանոնավորումների կողմից կամ անհրաժեշտ են նրա պահպանության եւ պաշտամունքի ապահով ու հանգիստ անցկացման համար:

Քաղաքացիական իշխանությունները ինքնակամորեն չպետք է արգելեն սրբավայրեր այցելողների եւ ուխտավորների մուտքը երկիր, ինչպես նաեւ ինքնակամորեն չպետք է արգելեն օտար անձնակազմի բնակությունը՝ կապված վայրերի հետ:

Հոդված 4. Վայրերը նվիրված են ավելի քան մեկ կրոնի

Որտեղ որ վայրը փոխադարձ կերպով ճանաչվել է որպես սուրբ ավելի քան մեկ կրոնական համայնքի հաստատված ավանդույթներում, համապատասխան հեղինակությունները պետք է խորհրդակցեն այդ համայնքների հետ՝ զարգացնելու համար օրինական կարգավորումներ յուրաքանչյուր համայնքի հետեւորդների օգնությամբ, որոնք իրավունք ունեն, հավասար մուտքը այնտեղ կրոնական նպատակների համար եւ պահպանությունը վայրի կրոնական համայնքներին վերաբերող հավասար հնարավորություն է:

Հոդված 5. Հակասության կանխում եւ լուծում

Սրբավայրերին վերաբերող բոլոր հակասությունները կամ սպառնալիքները պետք է անմիջապես քննարկման հանձնվեն կրոնական հեղինակությունների եւ գործի հետ առնչություն ունեցող այլ անձանց միջեւ հաղորդակցությունը եւ համակարգումը ապահովող ներկայացուցչական ժողովին, եւ որտեղ հնարավոր է խորհրդատու անձին՝ վերականգնելու:

Հոդված 6. Վերակառուցում եւ հուշարձանացում

Գործի հետ առնչություն ունեցող հեղինակությունները պետք է չափերը վերցնեն հակասության ընթացքում ավերված կամ վնասված սրբավայրերի վերակառուցումը կամ հուշարձանացումը հեշտացնելու համար՝ կրոնական համայնքի ցանկություններին համապատասխան:

Անհրաժեշտ թույլտվությունները սրա վերջում պետք է համաձայնեցվեն, ինչպես պատվիրված է օրենքով եւ համապատասխան հարգանքով սեփականության իրավունքներին, առանց անհարկի ուշացման եւ առանց հատուկ օրինական վարչական խոչընդոտներ առաջացնելու:

Հոդված 7. Օտարում կամ ազգայնացում

Կրոնական համայնքին կամ համայնքներին վերաբերող սրբավայրի որեւէ մասի առաջարկված սեփականազրկման կամ ազգայնացման դեպքում, պետք է համապատասխանաբար ներկայացվի եւ պաշտոնապես քննարկվի գործընթացի բոլոր բնագավառներում: Համապատասխան հեղինակությունը պետք է հարկ դնի՝ առաջարկելով ապահովություն մշակութային ժառանգության պաշտպանության համար, վայրի համապատասխան օգտագործման համար՝ հարգանքով իր կրոնական ավանդության հանդեպ եւ կրոնական փորձառության շարունակականության համար: Կրոնական համայնքը պետք է օգնության դիմի դատարանին, եթե համաձայնություն չի կայանում:

Որտեղ անցյալում սրբավայրը ազգայնացվել է, կրոնական համայնքի այդպիսի սեփականության վերականգնումը պետք է խրախուսվի:

Հոդված 8. Կրթություն եւ հասարակական խոսք

Իրենց հասարակական որոշումներում եւ կրթական գործունեության մեջ բոլոր կառուսակցությունները [խմբակցությունները] պետք է առաջ քաշեն սրբավայրերի պահպանությունը, ուրիշների համար սրբավայրերի կարեւորության ճանաչումը՝ որպես պաշտամունքի վայրեր եւ ինքնության վայրեր, ուրիշների զգայունակության հարգելը այս վայրերի հարգանքով եւ շեշտել նրանց հոգեւոր արժեքը ավելի, քան որեւէ ռազմավարական, տարածքային կամ զինվորական կարեւորություն: Խմբի կապվածությունը իր սրբավայրին չպետք է մերժվի:

Պետք է քննարկվեն՝ կրոնական համայնքները հարգելով իրենց սրբավայրի՝ տուրիստական, գիտական, կրթական եւ այլ նպատակներով հասարակական զարգացումը: Այդպիսի զարգացումը պետք է հաշվի առնի համայնքին վերաբերող ինքնությունը եւ կրոնական սովորությունները:

Հոդված 9. Սրբավայրերի հիմնադրում

Բոլոր կրոնական համայնքների սրբավայրեր հիմնելու եւ պահպանելու իրավունքը, պատշաճ հարգանքը դեպի ուրիշների իրավունքները, պետք է ճանաչվի որպես հավատքի կամ կրոնի ազատության անբաժան մաս:

Որեւէ զավթող ուժ չպետք է հաստատվի, ոչ էլ պետք է թույլ տա որեւէ մշտական նոր սրբավայրի հաստատում, եթե պատշաճ հարգանք չի ցուցաբերում զավթված տարածքի բնակչության սեփականության իրավունքների հանդեպ:

Հոդված 10. Պեղումներ եւ հետազոտություն

Սրբավայրերում հնագիտական պեղումներ կարող են կատարվել միայն այն բոլոր կրոնական համայնքների հետ քննարկումից եւ համաձայնությունից հետո, ում որ վայրը նվիրված է, ինչպես պատվիրված է օրենքով եւ՝ նվազագույն միջամտությամբ վայրի կրոնական օգտագործմանը:

Պատմական հայտնագործությունները վայրի հեռավոր անցյալի վերաբերյալ չպետք է վնասեն սեփականատիրության եւ ղեկավարման ներկա պատրաստություններին , ոչ էլ

նրանք պետք է չարաշահվեն՝ քննելով կրոնական համայնքի սովորական ինքնությունը՝ կապված վայրի հետ:

ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոդված 11. Խորհրդատու անձեր

Խորհրդատու անձեր պետք է հաստատվեն վերահսկելու համար այս Կանոնակարգի կատարումը տեղական, շրջանային եւ ազգային աստիճանների վրա համապատասխանաբար:

Խորհրդատու մարմինը պետք է ընդգրկի ներկայացուցիչներ կրոնական համայնքներից, հասարակական հեղինակություններից եւ այլ պատշաճ անձանցից: Նրա անդամները պետք է երաշխավորեն ապրել այս Կանոնակարգով եւ օգտագործել իրենց ազդեցությունը եւ լավ գրասենյակները առանձին կամ միասին՝ նպաստելու նրա նպատակներին:

Խորհրդատու անձը, իմիջիայլոց, պետք է՝

1. Կազմի սրբավայրերի մի ցանկ՝ ճանաչված որպես այս Կանոնակարգի դրության տակ ընկնող

2. Նրա անդամներից ցանկացած մեկի խնդրանքով պետք է քննարկի այս Կանոնակարգի նպատակների վերաբերյալ որեւէ սպառնալիք կամ որեւէ բանավեճ վայրի կարգավիճակի շուրջ, եւ ուղիներ փնտրի լուծելու դրանք երկխոսության, հաշտության եւ համերաշխության ոգով:

3. Համապատասխան խորհուրդ տա հեղինակություններին սրբավայրերին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ

4. Հրապարակի կանոնավոր զեկույցներ նրա աշխատանքների եւ տվյալ շրջանում այս կանոնակարգի կատարման ուղղությամբ արված առաջընթացի մասին:

Հոդված 12. Միջազգային վերահսկում

Միջազգային կառույց պետք է զարգացնի այս կանոնակարգի կատարման վերահսկումը: Այս միջազգային վերահսկումը հանձնարարված է՝ բարձրացնելու համար այս Կանոնակարգի յուրացումը բոլոր պատշաճ հավաքատեղիներում՝ համագործակցելով պատշաճ միջազգային կազմակերպությունների հետ, խրախուսելով խորհրդատու անձանց հաստատումը, օժանդակելով խորհրդատու անձանց իրենց գործերում, փաստաթղթայնացնելով եւ քննելով ամբողջ աշխարհում այս Կանոնակարգի կատարման ուղղությամբ զարգացումը եւ զեկուցելով խախտումները Կանոնակարգի մասին: Քարտուղարությունը պետք է սկսի պարզել միջազգային վերահսկման առաջադրանքները ժամանակավոր հիմքի, վրա մինչեւ մշտական միջազգային վերահսկում հաստատվի:

Ընդունված է «Սրբավայրեր» համաժողովի կողմից Թրոնդհայմում, Նորվեգիա, 27-28 հուլիս 2009, կազմակերպված «Մեկ աշխարհ երկխոսության մեջ» եւ «Օսլոյի՝ Խաղաղություն եւ մարդու իրավունքների կենտրոն» կազմակերպությունների կողմից: